ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 23 ԱՊՐԻԼԻ 2019Թ.
№ 9 (499)
www.syuniacyerkir.am

... Բեմի վրա խաղացողները շնորհքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները՝ ցածերն ու կեղծավորները:

Հովհաննես Թումանյան

Հայոց պետությունը շարունակում է գաղտնի պահել, թե ովքե՞ր են Քաջարանի կոմբինատի սեփականատերերը

Ապրիլի 18-ին ԱԺ-ում ուշագրավ երկխոսություն է տեղի ունեցել՝ կապված ընդերքի մասին օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների շուրջ:

«Դուք տեղյա՞կ եք, թե հանքերի իրական սեփականատերերն ովքեր են, ի՞նչ ծավալի ստվերային տնտեսություն կա մետաղական հանքարդյունաբերության ոլորտում»,- «Ընդերքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին հարցի քննարկմանը Գարեգին Բաղրամյանին հարցրեց «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Միքայել Մելքումյանը:

Նա հետաքրքրվեց նաեւ, թե գործող ձեռնարկությունների ո՞ր մասն է գրանցված օֆշորային գոտիներում, եւ ֆինանսական ռեսուրսների ո՞ր մասն է, որ չի վերադառնում հանրապետություն: «Եթե չեմ սխալվում՝ մեր էքսպորտի 40 տոկոսը գունավոր մետաղներն են»,- հավելեց պատգամավորը:

- Նաեւ Ձեր բարձրացրած բոլոր մտահոգությունները հաշվի առնելով նախաձեռնվել է այս օրենսդրական նախաձեռնությունը: Ճիշտ նկատեցիք, որ այն քննարկվել է նաեւ վեցերորդ գումարման նստաշրջանում, առաջին ընթերցում անցել է, ուղղակի վերջնական քվեների բացակայության պատճառով տեղափոխվել է յոթերորդ նստաշրջան: Կան ընկերություններ, այո՛, որոնց որոշակի բաժնետերեր գրանցված են օֆշորային տարածքներում, եւ այս օրենսդրության նախաձեռնության ընդունման նպատակը նրանում է կայանում, որ, մինչեւ վերջին

էջ 2

Իրական սեփականատերերին բացահայտելու նախագիծը

ՀՀ կառավարությունը հանքարդյունաբերության կազմակերպությունների իրական սեփականատերերին բացահայտելու օրենքի նախագիծ է մշակել:

Կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին եւ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին օրենքի նախագծերի փաթեթն ապրիլի 18-ին Ազգային ժողովում ներկայացրեց ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող Գարեգին Բաղրամյանը:

«Հայաստանը 2017 թ. մարտից հանդիսանում է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության թեկնածու երկիր: Այն միջազգային կազմակերպություն է, որին անդամակցելով՝ ստանձնել ենք մի շարք պարտավորություններ, որոնց կատարումը պետք է բերի հանքարդյունաբերության ոլորտի առավել բաց, թափանցիկ եւ հաշվետու կառավարման: Պարտավորություններից մեկն էլ ոլորտում գործող հանքարդյունաբերության կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտումն է: Նախագծերի սույն փաթեթով կարգավորվում է իրական սեփականատերերի բացահայտման ողջ գործընթացը»,- ասաց Բաղրամյանը:

Մեղրիի գնդում տեղի ունեցած դեպքով մեղադրանք է առաջադրվել

Մեղրիի զորամասում զինծառայողների անհնազանդության, զորամասը լքելու եւ դրան հետեւած իրադարձությունների առիթով հարուցված քրեական գործով դատախազի ցուցումով մեղադրանք է առաջադրվել մի քանի զինծառայողի:

«Զինծառայողներին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ զինծառայության առանձին պարտականություններ կատարելուց հրաժարվելը»,-նշեցին դատախազությունից:

Հիշեցնենք՝ Մեղրիում տեղակայված զորամասերից մեկի զինծառայողներն ինքնակամ լքել էին զորամասը՝ բողոքելով իրենց ծառայակիցներից մեկին այլ զորամաս տեղափոխելու որոշման դեմ: Գնդի սպաների խոսքով՝ մասսայական այս ակցիան կազմակերպելու մեջ կասկածվող զինծառայողները պարբերաբար աչքի են ընկել ոչ կանոնադրային պահվածքով:

Զորամասում գրանցված միջադեպով երկու քրեական գործ է հարուցվել:

irakanum.am

Կապանի հիվանդանոցի անեսթեզիոլոգ-ռեւմատոլոգի գլխին գործ փաթաթեցին միայն այն պատճառով, որ նա Սմբատ Օրբելյանի դեմ մարզպետարանի գործողությունները հանցավորություն որակեց

Երկու տարի առաջ մարզպետարանում լուրեր շրջանառվեցին, թե Կապանի բժշկական կենտրոնի անեսթեզիոլոգ- ռեւմատոլոգ Անուշավան Կարապետյանը բժշկական կենտրոնում բուժվող մի աղջկա հանդեպ բռնաբարության փորձ է կատարել:

Դրան հաջորդեցին քննչական եւ դատավարական գործողություններ:

1.9 տարի անազատության մեջ լինելուց հետո նա ազատ է արձակվել, իսկ դատաքննությունը, որքան էլ տարօրինակ է, վերսկսվում է նորից՝ ելման կետից:

Անուշավան Կարապետյանի փոխանցմամբ՝ դա, ի սկզբանե, սարքված գործ էր, բեմադրություն՝ ուղղված Կապանի բժշկական կենտրոնի այն ժամանակվա տնօրեն Սմբատ Օրբելյանին աշխատանքից ազատելուն եւ վարկաբեկելուն:

Խմբագրություն այցելած հյուրից ցանկացանք որոշ մանրամասներ իմանալ երկու եւ ավելի տարի առաջ տեղի ունեցած միջադեպի մասին, որ բնավ չի կորցրել հրատապությունը եւ չի հասել եզրագծին:

- Հարգելի պարոն Կարապետյան, նախ՝ կուզեինք դատական գործի պատմությանը ծանոթանալ:

- Տուժողը՝ Աստղիկ Հ-ն, հայտարարություն էր տվել Կապանի ոստիկանության բաժին, 2017 թվականի հունվարի 18-ին, թե բուժող բժիշկը վերակենդանացման բաժանմունքից իրեն տարել է բժիշկների սենյակ, ասել է՝ ես քեզ բուժել եմ, հիմա էլ ուզում եմ սիրել, համբուրել եւ այլն: Այդ հայտարարության հիման վրա իմ դեմ քրեական գործ են հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 34/138 հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի (բռնաբարության փորձ) հատկանիշներով:

Մինչեւ քրեական գործ հարուցելը Կա-

էջ 3

Ապրիլի 20-ին եւ 21-ին փլվել է Խդրանց գյուղի եկեղեցին

Ինչպես տեղեկացնում է Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը, ս.թ. ապրիլի 20-ին եւ 21-ին փլվել է Կապանի տարածաշրջանի Խդրանց գյուղի եկեղեցին, որ տարիներ շարունակ գտնվում էր վթարային վիճակում:

Կապանից 8 կմ հյուսիս-արեւելք գտնվող գյուղի եկեղեցին, որի անունը հայտնի չէ, հիմնադրվել է 1892 կամ 1899 թվականին:

Դատելով Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» կոթողային գործից, կարելի է նշել, որ Խդրանցն Արեւելյան Բաղքի (Քաշունիքի կամ Բարկուշատի) երբեմնի Սիրքյադազ (Սիրքեադազ կամ Սիրքաթաս) գյուղն է, որ հետագայում կոչվել է Խնդրանց, ավելի ուշ՝ Խդրանց: Իսկ թե ինչպես է կոչվել հնում՝ դժվար է ասել:

Հայտնի է նաեւ գյուղի տարածքի ամենանշանավոր պատմամշակութային հուշարձանը՝ Չորեքդռնի վանքը՝ երեք եկեղեցիով, որոնցից երկուսը վաղուց են փլված:

Հ.Գ.

Խդրանց գյուղի եկեղեցու փլուզման մասին տեղեկություն է տարածել Արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Հայտարարության մեջ մասնավորապես նշվում է, որ փլուզվել է եկեղեցու կողային պատը՝ մոտ 180 քմ մակերեսով:

«Սյունյաց երկիր»

Սուրբ Հարության պատարագ՝ Սյունյաց թեմի եկեղեցիներում

Ապրիլի 21-ին Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց աստվածասկիզբ թեմի եկեղեցիներում տեղի ունեցան Սուրբ Հարության պատարագի արարողություններ:

Սյունյաց թեմի առաջնորդանիստ եկեղեցում՝ Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարում, Սուրբ պատարագը մատուցեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

Հայր սուրբը մաղթեց, որ Սուրբ Հարության լույսն իշխի ամեն մի ընտանիքում եւ այդ լույսն թող ոգեշնչման աղբյուր դառնա, որ մենք կարողանանք կերտել շեն, հզոր եւ լուսավոր հայոց պետություն:

Կամոքն Աստծո Սյունիքի հավատավոր զավակները մեծ հոսքով երեկ եւ այսօր մասնակցեցին Սուրբ պատարագի արարողություններին:

Իսկապես, Սյունիքում ժամանակ առ ժամանակ զարթոնք է ապրում եկեղեցական կյանքը, որի վկայությունն էին ապրիլի 20-ի ճրագալույցի եւ ապրիլի 21-ի Սուրբ Հարության տոնի պատարագներին հավատավոր ժողորդի մասնակցությունը:

-Քրիստոս հարյավ ի մեռելոց:

-Օրհնյա՜լ է հարությունը Քրիստոսի:

***

Ապրիլի 21-ին Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Տեր Վահան քահանա Հեբոյանի կողմից մատուցվել է պատարագ, մեկնվել է Սուրբ Հարության տոնի խորհուրդը, մարդիկ իրար ողջունել են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով եւ ստացել «Օրհնյա՜լ է հարությունը Քրիստոսի» պատասխանը: Այնուհետեւ տեղի է ունեցել հավկիթների օրհնություն:

Տոնական սուրբ պատարագից հետո եկեղեցու բակում կազմակերպվել է գեղեցիկ համերգային ծրագիր մշակույթի կենտրոնի ստեղծագործական կազմի մասնակցությամբ: Այնուհետեւ մատուցվել են հայկական, զատկական տոնական ուտեստներ՝ լավաշ, ձուկ, կանաչի, ժենգյալով հաց, չրով եւ չամիչով փլավ, կարմիր ներկած ձու եւ գինի:

Պատարագի սրբազան արարողությանը մասնակցում էին մարզային եւ համայնքային իշխանության ներկայացուցիչներ՝ գլխավորությամբ Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանի:

***

Ապրիլի 20-ին, ժամը 17-ից Վահանավանքի (Հովհաննավանքի) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարում տեղի ունեցավ Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագ:

Ճրագալույցի պատարագը մատուցեց Վահանավանքի հոգեւոր հովիվ Տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը:

Ապրիլի 21-ի առավոտվանից Վահանավանքում տեղի է ունեցել Սուրբ Հարության պատարագ՝ հարյուրավոր կապանցի հավատավորների մասնակցությամբ:

Պատարագը կրկին մատուցել է Վահանավանքի հոգեւոր հովիվ Տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը:

***

Ապրիլի 20-ին, ժամը 17-ից Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի եկեղեցիներում տեղի ունեցան Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագի արարողություններ:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագ մատուցեց Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Տաթեւի վանքի Սուրբ Պողոս-Պետրոս տաճարում Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագ մատուցեց Տաթեւի վանքի վանահայր Միքայել վարդապետ Գեւորգյանը:

Սյունյաց թեմի առաջնորդանիստ եկեղեցում՝ Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց Գորիսի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Ահարոն քահանա Մելքումյանը:

Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագ մատուցեց Տեր Վահան քահանա Հեբոյանը:

Մեղրիի Սուրբ Հովհաննես եկեղեցում Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանի կողմից մատուցվեց Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագ:

Քաջարան գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցում Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագ մատուցեց Տեր Շիրակ քահանա Խանոյանը:

Դարբասի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցում Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագ մատուցեց Դարբասի հոգեւոր հովիվ Տեր Ընծա քահանա Միրզոյանը:

«Սյունյաց երկիր»



21 ապրիլի 2019թ., Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

21 ապրիլի 2019թ., Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Հայոց պետությունը շարունակում է գաղտնի պահել, թե ովքե՞ր են Քաջարանի կոմբինատի սեփականատերերը

էջ 1

ֆիզիկական անձը, պարտավորություն է տրվում հանքարդյունաբերությամբ զբաղվող բոլոր ընկերություններին՝ բացահայտելու, եւ իրենք պարտավոր են պետռեգիստր ներկայացնել մինչեւ վերջին ֆիզիկական անձի վերաբերյալ տվյալ, այսինքն՝ օֆշորում գրանցված ընկերություն, այդ ընկերության բաժնետոմսեր եւ մինչեւ վերջին ֆիզիկական անձ…

-Պարոն Բաղրամյան, հիմա առաջ անցնեք մի փոքր, ընդունենք ներկայացվում է թերի ինֆորմացիա կամ տեղեկատվություն: Նախատեսո՞ւմ է օրենքն այնպիսի վարչարարական մեխանիզմներ՝ բացահայտման հետ կապված, թե՞ հենց ռիսկեր կա, որ մենք, ի վերջո, չենք էլ կարող բացահայտել… ֆիզիկական անձանց (դուք ասում եք մինչեւ վերջին ֆիզիկական անձը)… Եթե թերի են հայտարարագրվում, կարծում եք մեր վարչարարական գործիքները բավարա՞ր են, որպեսզի այդ բացահայտումները լինեն ամբողջական: Պատահական չէ, որ հարց տվեցի՝ մենք առանց այս օրենքի գիտե՞նք, թե՞ չգիտենք մինչեւ վերջ՝ ովքե՞ր են իրական սեփականատերերը:

-Այս պահին օրենքը նախատեսում է լուծումներ նաեւ համապատասխան կեղծ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում. պահանջ կա, որ մինչեւ նոյեմբերի 30-ը պետք է բոլորը ներկայացնեն: Կեղծ տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում դա հիմք է հանդիսանում իրենց ընդերքօգտագործման լիցենզիան կասեցնելու կամ նույնիսկ զրկելու համար:

Կարճեւան համայնքի նախկին ղեկավարին առաջադրվել է մեղադրանք

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական գործով ձեռնարկվում են ակտիվ քննչական եւ դատավարական այլ գործողություններ՝ համապատասխան ընկերությանը Մեղրիում ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակով հողատարածքներ հատկացնելու գործընթացում Սյունիքի մարզի Կարճեւան համայնքի նախկին ղեկավարի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի հանգամանքների բազմակողմանի քննությունն ապահովելու ուղղությամբ: Այս մասին հայտնում են ՀՀ քննչական կոմիտեի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից:

«Նախնական տվյալներով՝ Կարճեւան համայնքի նախկին ղեկավարը, հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական այլ դրդումներով, ի պաշտոնե լինելով համայնքի սեփականություն հանդիսացող հողատեսքերի օտարման աճուրդի կազմակերպիչ, խախտելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման պահանջները, առանց աճուրդ կազմակերպելու, կազմել է դրա ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ կեղծ պաշտոնական փաստաթղթեր, որոնց հիմքով շուրջ 32 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքներն օտարվել են ՓԲ ընկերությանը:

Քննությամբ տվյալներ են ձեռք բերվել նաեւ այն մասին, որ Կարճեւան համայնքի նախկին ղեկավարը, անձնական այլ դրդումներով՝ հետագայում ավելի թանկ գնով վաճառելու եւ օգուտներ ունենալու նպատակով, դարձյալ խախտելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման պահանջները, առանց աճուրդ կազմակերպելու, կազմել է դրա ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ կեղծ պաշտոնական փաստաթղթեր, որոնց հիմքով 0.44672 հա, 0.29718 հա եւ 0.63508 հա մակերեսով հողատարածքներն օտարել է իրականում իր շահերը ներկայացնող անձանց:

Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝ 2019թ. ապրիլի 11-ին Կարճեւան համայնքի նախկին ղեկավարին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով (երկու դրվագ):

Հաշվի առնելով, որ կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ վերոնշյալ գործարքների ժամանակ խախտվել են տվյալ ոլորտը կարգավորող «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման պահանջները, մասնավորապես՝ աճուրդին մասնակցելու հայտերը կազմվել եւ դրանք ստորագրողներին են ներկայացվել հետին ամսաթվերով, հրապարակային սակարկություններ որպես այդպիսին չեն անցկացվել, սակայն կազմվել, ստորագրվել եւ շրջանառության մեջ են դրվել «Հողամասն աճուրդով վաճառելու մասին» կեղծ արձանագրություններ եւ Կարճեւան համայնքի ղեկավարի կեղծ որոշումներ, վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարին՝ առաջարկելով նախաձեռնել համայնքին պատկանող եւ օրենքի ու այլ իրավական ակտերի խախտմամբ օտարված 6 գործարքներն առոչինչ ճանաչելու եւ գույքային միավորները համայնքների հաշվեկշիռ վերադարձնելու գործընթաց:

Մեղրու ազատ տնտեսական գոտի

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»,- նշված է հաղորդագրության մեջ:

armtimes.com

Կապանի հիվանդանոցի անեսթեզիոլոգ-ռեւմատոլոգի գլխին գործ փաթաթեցին միայն այն պատճառով, որ նա Սմբատ Օրբելյանի դեմ մարզպետարանի գործողությունները հանցավորություն որակեց

էջ 1

պանի բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար Ռոմա Սարգսյանը կանչել է ինձ եւ ասել, որ դիմում պիտի գրեմ աշխատանքից ազատվելու մասին. մարզպետն է այդպես ուզում: Դիմումը գրել եմ հունվարի 23-ին, աշխատանքից ազատվել եմ փետրվարի 14-ին:

Հունվարի 26-ին ձերբակալել են՝ խափանման միջոց ընտրելով կալանավորումը, երեք օր պահել են Կապանի ոստիկանության բաժնի մեկուսարանում, հետո՝ ամսի 30-ին, տեղափոխել «Գորիս» քրեակատարողական հիմնարկ:

Երկու ամիս քննություն գնաց, հետո խնդրեցի, որ դատաքննությունն արագացնեն, երկու ամիսը դարձավ 1,5 ամիս, հետո դատախազը մեղադրանք ներկայացրեց եւ «հիմնավորեց» նույն՝ 34/138 հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի (նախատեսված է 4-10 տարի ազատազրկում) հատկանիշներով «իմ գործած մեղքերը»: Եվ առաջարկեց դատապարտել 5 տարի ազատազրկմամբ. դա 2017 թվականի հոկտեմբերին էր: Հետո դատավորը հոդվածը փոխեց՝ բռնաբարության փորձի փոխարեն՝ սեռական գործողություններին հարկադրել, որ նախատեսում է ազատազրկում մեկից երեք տարի:

Դատապարտեցին երկու տարվա ազատազրկման, որից նստեցի մեկ տարի ինը ամիսը. մեկ տարի՝ «Գորիս» քրեակատարողական, ինը ամիս՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Սակայն դրանից հետո անգամ դատավճիռն օրինական ուժի մեջ չմտավ: Եւ ես եմ բողոքարկել 1-ին ատյանի վճիռը, եւ դատախազն է բողոքարկել:

Վերաքննիչ դատարանը դատախազի բողոքը մերժեց, իմ բողոքը մասամբ բավարարեց: Ասացին՝ սխալ հոդված են կիրառել:

Հիմա մեղադրյալի կարգավիճակից նորից դարձել եմ ամբաստանյալ, եւ նորից դատաքննություն է ընթանում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում: Բայց վեց ամիս է՝ հոկտեմբերի 26-ից առ այսօր, դատական նիստ չի գումարվում: Մնացել եմ Երեւան-Գորիս ճանապարհին, քանի որ Երեւանում եմ բնակվում: Սպասողական վիճակի մեջ եմ. դատական նիստերը հետաձգելու համար ամեն անգամ մի պատրվակ է հորինվում:

-Ձեր անձնական նկատառումը, ի՞նչ տեղի ունեցավ 2017 թվականի հունվարի 16-ին:

- Այդ օրն ընդունեցի շտապօգնության բերած հիվանդ, որ մեծ քանակությամբ դեղահաբ էր ընդունել՝ կյանքին վերջ տալու նպատակով, թե իբր սիրահարվել է մի երիտասարդի, ով իրեն չի սիրում: Երկու օր հետո, իրավիճակից ելնելով, որոշեցինք տեղափոխել այլ սենյակ, որ «Բժիշկների սենյակ» ցուցանակն էր կրում, մահճակալ հատկացվեց իրեն ու քրոջը, հոգատարությամբ էին շրջապատված:

Առավոտյան բժիշկներից մեկը եկավ եւ ինձ արթնացրեց՝ գնացել-բողոքել են, թե իբր ուզեցել եմ բռնաբարել այդ հիվանդին: Ո՞վ է բողոքել, թե՝ Աստղիկի հայրը: Տեսա՝ ոստիկաններ են եկել. այդպես գործ հարուցեցին:

Նախորդ երեկոյան բժշկական կենտրոնի տնօրեն Սմբատ Օրբելյանին էին ազատել աշխատանքից եւ, ըստ էության, հիվանդանոցի շուրջ աղմուկը պետք է հարատեւեր նոր թափով ու նոր դրսեւորումներով...

-Արդեն անցել է երկու տարի երեք ամիս, նախաքննության եւ դատավարության ողջ ընթացքում ի՞նչ ապացույցներ են բերվել ընդդեմ Ձեզ:

- Նախ՝ տուժողի հայտարարությունը: Կատարվել են հարցաքննություններ, փորձաքննություններ. աղջկա վզի վրա ինչ-որ երկար հետքեր կային, դատական բժշկի բնորոշմամբ՝ համբույրի կամ որեւէ բութ առարկայի ներգործության հետեւանք են: Բռնաբարության ոչ մի հետք չկար. ինքը չի գոռացել, օգնություն չի կանչել, պառկել ու հանգստացել է մինչեւ առավոտ, իսկ առավոտյան բուժքրոջ հարցմանը պատասխանել է, թե իրեն լավ է զգում, որեւէ խնդիր չունի: Հետո մտել է հայրը եւ աղմուկ-աղաղակ բարձրացել, թե աղջկաս բռնաբարել են…

- Այդ դեպքում ի՞նչ ապացույցի հիման վրա են Ձեզ մեղադրանք ներկայացրել եւ դատել:

- Ոչ մի հիմնավոր ապացույց: Կա պարանոցի վրայի հետքը եւ նրա կողմից ձեռքս կծելու հետքը, որը նախապես պլանավորված ակցիայի հետեւանք էր:

-Ըստ Ձեր դիտարկման՝ ինչո՞ւ Ձեզ ներքաշեցին նման սադրանքի մեջ:

- Ինձ սադրանքի մեջ ներքաշելու եւ պատժելու առնչությամբ մի գլխավոր վարկած կա: Ցանկանում էին վարկաբեկել Կապանի բժշկական կենտրոնի գլխավոր բժիշկ Սմբատ Օրբելյանին: Այդ նպատակով մարզպետարանի կողմից հիվանդանոցում հրավիրված ժողովում ես հակադրվեցի մարզպետարանի վարչության պետ Նունեին, ով վիրավորական խոսքեր հնչեցրեց ե՛ւ պարոն Օրբելյանի, ե՛ւ հիվանդանոցի ամբողջ կոլեկտիվի հանդեպ: Իմ դիրքորոշման մասին, ըստ էության, շատ արագ տեղեկացվեց օրվա մարզպետը, որից հետո սկսվեց հետապնդումների արշավը:

Հունվարի 17-ին, հերթապահության ժամանակ, իմացա, որ բժիշկ Օրբելյանին ազատել են աշխատանքից: Ժամեր անց տեղի ունեցավ այն, ինչ արդեն ներկայացրի:

Կարծում եմ՝ ինչ-որ մեկի կողմից, ով ավելի հզոր է եղել, սարքել են այդ գործը, որ հանրությանը ցույց տան, թե տեսեք՝ Օրբելյան Սմբատի ղեկավարած կառույցում նման բան է կատարվում: Իմ խորին համոզմամբ՝ բեմադրությունը նրան վարկաբեկելու նպատակ էր հետապնդում: Առանց վարանելու կարող եմ տալ այդ մարդու անունը՝ Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյան, ում դրածոներն այսօր էլ մարզպետարանում են, Կապանի, Քաջարանի հիվանդանոցներում եւ հալածում են ինձ: Դեռ այն ժամանակ բժշկական կենտրոնի տնօրեն Ռոմա Սարգսյանը, երբ ինձ հորդորեց աշխատանքից ազատվելու վերաբերյալ դիմում գրել, ասաց, որ մարզպետն է այդպես պահանջել. ինքը չի կարող մարզպետի խոսքից դուրս գալ: Մարզպետարանի իրավաբանը (այդ արարածի անուն-ազգանունը չեմ հիշում) բժշկական կենտրոնում ինձ այցի եկավ եւ փոխանցեց, որ ճիշտ կլինի, որ աշխատանքից ազատվելու դիմում գրեմ. մարզպետն է այդպես կամենում: Մի խոսքով՝ այնպիսի վիճակի մեջ դրեցին, որ դիմում գրեցի:

Այն, որ իմ աշխատանքից ազատելը մի կետից էր ուղղորդված, երկու կարծիք լինել չի կարող, որովհետեւ հետագայում (ու մինչեւ այսօր) այդպես էլ ինձ չհաջողվեց տեղավորվել աշխատանքի: Դիմել եմ Քաջարանի բժշկական կենտրոնի տնօրենին, սկզբից լավ ընդունեց, հետո զանգեց Կապանի բժշկական կենտրոն, հետաքրքրվեցին ինձնով, սրանք էլ՝ բա էդ բժիշկը խմելու հետ սեր ունի: Հետո եկա Կապանի բժշկական կենտրոն, չընդունեցին ընդհանրապես, հրահանգել էին՝ հանկարծ ներս չթողնել: Ահա այսպիսի թշնամական վերաբերմունք է ձեւավորվել իմ անձի շուրջը... 30 տարի բժիշկ եմ աշխատել, բարեխղճորեն կատարել պարտականություններս, ուրիշ բան հիմա չեմ կարող անել: Եվ հիմա Սյունիքի բուժական հիմնարկներում աշխատանքի չեն ընդունում ինձ, թեեւ դատարանի որոշմամբ որեւէ արգելք չկա իմ մասնագիտությամբ զբաղվելու համար: Պարզապես ամեն ինչ արվում է, որպեսզի ինձ աշխատանքի չընդունեն, քանի որ ես Սմբատ Օրբելյանին աշխատանքից ազատելը մարզպետարանի հանցավոր գործելակերպի դրսեւորում եմ համարել:

Ի դեպ, բուժանձնակազմի եւս երկու անդամ, որ համարձակվել էին դատապարտել մարզպետարանի ապօրինի պահվածքն ընդդեմ Սմբատ Օրբելյանի, շատ շուտով դարձան քրեական գործերի թիրախ…

Ապշելու ժամանակներ էին Սյունիքում, ով որեւէ հարցում չէր համաձայնվում օրվա մարզպետի հետ, մարզի իրավապահներն ինչ-ինչ պատրվակներով անմիջապես քրեական գործեր էին հարուցում:

Այդ իրավապահ կոչվածները, ի դեպ, մինչեւ այսօր պատասխան չեն տվել:

- Այդ ամենից հետո ի՞նչ եք մտադիր անել, Ձեր իրավունքներն ինչպե՞ս պիտի պաշտպանեք:

- Իմ իրավունքները պաշտպանելու համար նախ աշխատանք եմ ուզում՝ իմ մասնագիտությամբ, իսկ ընդհանրապես՝ արդարացում՝ մինչեւ վերջ: Եթե հանրապետության դատական ատյաններում արդարության չհասնեմ, դիմելու եմ Եվրադատարան՝ իմ պատվին ու արժանապատվությանը հասցված վնասը վերականգնելու համար: Օր ծերության էլ ուրիշ հոդված չկարողացա՞ն գտնել... Ու այդքանից հետո պարզվեց, որ 1.9 տարի նստել եմ՝ չունենալով կոնկրետ հոդվածով մեղադրանք: Հիմա նորից քննություն է ընթանում, թեեւ մեկ տարի ինը ամիս հենց այնպես մնացի անազատության մեջ:

Ու հայտնվել եմ տարօրինակ իրողության առջեւ՝ բռնաբարության փորձը, որի մեջ մեղադրվել եմ, դատարանը համարել է հիմնազուրկ, իսկ սեռական ոտնձգության մեջ մեղադրվելու համար էլ պատշաճ ապացույցներ ու փաստեր չեն բերվում: Մինչդեռ ճիվաղը, որ գլխիս սարքեց այդ գործը, ազատության մեջ է եւ վայելում է Սյունիքի ընդերքի հարստությունը:

- Որքանով տեղյակ ենք, հանդիպել եք Սյունիքի գործող մարզպետի հետ, դա Ձեր նախաձեռնությո՞ւնն էր:

- Իմ նախաձեռնությամբ էր՝ 2019-ի ապրիլին: Մարզպետն ասաց. **«Ոչ մեկին չեմ կարող ստիպել Ձեզ աշխատանքի վերցնել, չեմ կարող գործին միջամտել, խնդրում եմ առաջին ատյանի եւ Վերաքննիչ դատարանի դատավճիռների պատճենները ներկայացնել, խոստանում եմ հարցն ուսումնասիրել»:** Այնպես որ՝ ինձ աշխատանքի տեղավորելու միակ տարբերակը դատավարության ճանապարհով արդարանալն է, իսկ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, ինչպես նշեցի, վեց ամիս շարունակ այդ գործով նիստ չի գումարում՝ ամեն անգամ հորինելով մի պատճառ:

Զրույցը՝ Սամվել Ալեքսանյանի եւ Վահրամ Օրբելյանի

Հարժիսը՝ հեթանոս ասպվածների եւ կուռքերի պանթեոն

Մարդու դիմապատկերով վիշապակոթող (Ք.ա. 2-րդ հազարամյակ):

Վիշապակոթողն ուղղաձիգ, նեղ եւ բարձր սյուն է՝ իր ձեւով եւ չափով նման վիշապի, նիստերից մեկի վերջնամասում մարդու դիմապատկեր է՝ երկարավուն դեմքով, կիսաբաց բերանով, կանոնավոր դիմագծերով:

Վիշապակոթողն առնչվում է պտղաբերությամբ Ֆալլիկ պաշտամունքին եւ սլացիկությամբ ուղղված է դեպի երկինք:

Վիշապակոթողը ներկայումս գտնվում է գյուղի մշակույթի տան բակում:

Նորահայտ կուռքը լրացնում է Հարժիսի սրբազան լանդշաֆտից գտնված հուշարձանների շարքը:

Մարդու դիմապատկերով վիշապակոթողը տարիներ շարունակ ցուցադրվում էր Երեւանում՝ Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպված «Քարերը ժողովելու ժամանակը» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսում:

Քարե կուռք, գտնվել է ներկայիս գյուղատեղում:

Կերտված է սպիտակագորշ որձաքարից, ունի 76 սմ բարձրություն եւ զարդարված է հինգ դիմաքանդակով:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակ:

Պահվում է Գորիսի երկրագիտական թանգարանում:

Մարդակերպ քանդակ կամ կուռք, որ ի հայտ է եկել 2017թվականին՝ գյուղի գերեզմանատանը հողային աշխատանքներ կատարելիս:

Կնոջ կիսամարմին՝ պոկված գլխով, բազալտ, բարձրությունը՝ 1.25մ, լայնությունը՝ 50սմ:
Գտնվում է Հարժիսում՝ Արամ Սարգսյանի տնամերձում:

Գյուղի տարածքում գտնվող բազմաթիվ մենհիրներից երկուսը (նախնադարյան համայնական դարաշրջանի պաշտամունքային հուշակոթողներ՝ նվիրված նախնյաց հիշատակին):

Դիմամասը վնասված գլուխ, տեղական սպիտակ քար, բարձրությունը մոտ 50սմ, լայնությունը՝ 25սմ:
Գտնվում է Արամ Սարգսյանի տնամերձ այգում:
Երկու այս հուշարձանները գտել է Խաչատուր Սարգսյանը՝ 1942-ին:
Հուշարձանների հետ կապված ավանդազրույց կա գյուղում՝ դրանց խորհրդավորության ու զորավորության մասին:

Եվս մի քանի մարդակերպ քանդակներ կամ կուռքեր
(այս շարքի երեք հուշարձանը պահպանվում են գյուղի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում)

Եվս երկու հուշարձան, որ գյուղի փարածքից հանվել են ոչ օրինական ճանապարհով, եւ պատկան մարմինները պարտավոր են դրանք վերադարձնել Հարժիս:

Հ.Գ.

Հարժիսը Գորիսի շրջանի գյուղերից է:

Գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Ստեփանոս Օրբելյան պատմիչի «Սյունիքի պատմությունը» կոթողային գործում՝ մ.թ. 839 թվականին՝ Սյունյաց թեմի առաջնորդ Տեր-Դավթի եւ Սյունյաց տեր Վասակի որդի իշխան Փիլիպեի միջեւ կնքված հավիտենական կտակում՝ իբրեւ Տաթեւի հոգեւոր կենտրոնի նոր սահման:՝

Սակայն Հարժիսի տարածքը, իբրեւ բնակատեղի (այդ տարածքում կա յոթ գյուղատեղի), ըստ նյութական մշակույթի հուշարձանների, հայտնի է բրոնզի դարից (բրոնզի դարը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից մինչեւ մ.թ.ա. 1-ին հազարամյակ):

Պատրաստեց Սամվել Ալեքսանյանը

Երեկո՝ Ուբակի արվեստանոցում

Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանը հանդես է եկել նոր նախաձեռնությամբ՝ ստեղծել մի միջավայր, որտեղ հնարավորություն կունենան հանդես գալ կապանցի ստեղծագործողները, երաժիշտները, նկարիչները, դերասանները, մտավորականները: Անդրանիկ նախաձեռնությունը **«Երեկոն՝ Ուբակի արվեստանոցում»** խորագիրն էր կրում: Արվեստանոց այցելողները ոչ միայն հաղորդակցվեցին Ռուբեն Կոստանդյանի (Ուբակ) արվեստին, այլեւ հանդես եկան երաժշտական կատարումներով՝ դասական, ժողովրդական, ժամանակակից: Երեկոյի մասնակիցները մտերմիկ մթնոլորտում իրենց խոսքերն ու հույզերը փոխանցեցին միմյանց: Դե իսկ միջոցառումը մի պատեհ առիթ էր՝ ծանոթանալու Ուբակի ստեղծագործական աշխարհին, գեղանկարչի անցած ճանապարհին:

Ռուբեն Կոստանդյանը 1976 թ. ավարտել է Կապանի արվեստի դպրոցը: Փորձեց ընդունվել գեղարվեստաթատերական ինստիտուտ, մասնագիտությունն անցավ, իսկ պատմություն առարկան չկարողացավ հաղթահարել: Ծառայություն բանակում, որից հետո այլեւս ցանկություն չունեցավ շարունակել ուսումը: Կյանքում ունեցավ ուսուցիչներ՝ Վահրամ Խաչատրյան, Մարատ Նուրիջանյան, Ռաֆիկ Ավագյան, Ռոմեն Ղոնյան, Ռոբերտ Կամոյան, ումից շատ բան է սովորել: Հիշում է, որ նկարչական դպրոցում սովորելիս, Վահրամը ոգեւորեց իրեն, ասելով՝ շատ հետաքրքիր նկար ես արել:

1991-ի մարտին գեղանկարչական աշխատանքների առաջին անհատական ցուցահանդեսն ունեցավ հայրենի քաղաքում: Նրա անդրանիկ ցուցահանդեսի մասին թղթակցություն էի գրել «Ղափան» շրջանային թերթում: Երիտասարդ գեղանկարչին բարեմաղթանքի խոսքեր ասողների պակաս չկար: Հաճելի առիթով խոսք ասաց Ռոբերտ Կամոյանը. **«Այսօր մի սքանչելի երեւույթի ծննդյան վկան ենք բոլորս: Կապանում բացվում է մի ցուցահանդես, որի ստեղծագործությունների հեղինակը թեեւ երիտասարդ է, բայց նրան միանգամայն մատչելի են գույնի եւ գծի լեզուն: Ռուբենին ճանաչում եմ փոքրուց, երբ նկարչական դպրոց էր հաճախում: Շնորհալի երեխաներ շատ կային, բայց ոչ բոլորը քայլեցին արվեստի դժվարին ճանապարհով: Ռուբիկը հավատարիմ մնաց իր նախասիրությանը...»**:

Ուբակը միշտ էլ ակնածանքով է տվել իր ուսուցիչների անունները, բայց նաեւ շատ է զբաղվել ինքնակրթությամբ, ուսումնասիրել համաշխարհային արվեստը, նաեւ շեշտում է, որ իր ուսուցիչը բնությունն է եղել: Հետո հիշում է, որ պատանի տարիքում շատ է օգտվել հայրենի գյուղի՝ Վաչագանի գրադարանից, մորաքույրն էր գրադարանավարուհին՝ Նժդեհի զինակից Նավասարդի դուստրը: Եվ ընդհանրապես նրա մտապատկերում մանկուց դաջվել էին վաչագանյան բնապատկերները՝ Խուստուփ սարը, սարից սկիզբ առնող գետը, անտառամիջյան արահետները, գյուղի կոլորիտային մարդիկ՝ Լեզի բիբին, մյուսները:

Աստիճանաբար եկավ ճանաչումը, Կապանից հետո անհատական ցուցահանդեսներ ունեցավ Երեւանում (երեք անգամ), Դնեպրոձերժինսկում, Մոսկվայում (երկու անգամ 1999-ին եւ 2010-ին), 2008-ին Դուբայում ցուցադրվեցին նրա կտավները, իսկ 2017-ին եւ 2018 թվականին Փարիզում բացվեց նրա գեղանկարների անհատական ցուցահանդեսը: Ֆրանսիացի արվեստասերի համար հատկապես նորություն էին գեղանկարչի գծանկարները: Նրա աշխատանքները գտնվում են տարբեր երկրների արվեստի երկրպագուների հավաքածուներում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կանադա, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Ֆրանսիա, Լեհաստան, Բելգիա, Ռուսաստանի Դաշնություն եւ այլն:

Պատեհ առիթը բաց չթողեցի մի քանի հարցեր տալու գեղանկարչին:

Կա՞ մի նկար, որից դժվարությամբ է բաժանվել. «Կան նկարներ, որոնք մտնում են մեջդ ու դուրս չեն գալիս: Այսպիսի մի հետաքրքրական դեպք պատմեմ. մի բելգիացի եկել էր Կապան, լինելով իմ արվեստանոցում, ցանկացել էր մի գեղանկար գնել: Բնակվում էր Իտալիայում, ասում էր Բելգիայում պիտի տուն ունենամ եւ սեփական տանիք ունենալու խորհուրդը փաստորեն սկսվում էր այդ գեղանկարով»:

Գույներից նախընտրում է կարմիրը եւ կապույտը, ինչպես գեղանկարչությունն ու գրաֆիկան: **Իսկ ի՞նչ ասել է գույնի եւ գծի լեզու, որոնց տիրապետելը պարզապես անհրաժեշտություն է յուրաքանչյուր նկարչի համար.** «Մեկը մյուսին չպիտի խանգարի, գույնը չպիտի ճնշի գծին եւ ընդհակառակը, ինչպես նվագախմբում երաժշտական գործիքներից յուրաքանչյուրն իր դերն ունի: Նույնն էլ գեղանկարչության մեջ է՝ գիծը գիծ է, գույնը՝ գույն, մոտեցումը՝ մոտեցում եւ այլն»:

Ի՞նչ է զգում գեղանկարիչ Ռուբեն Կոստանդյանը նկարակալի առաջ՝ վրձինը ձեռքին. «Յուրաքանչյուր նկարիչ կանգնելով նկարակալի առաջ, ասես մենամարտի է դուրս գալիս, ժամանակը կասի՝ թե ով է հաղթողը»:

Ո՞ր թեմատիկան է հոգեհարազատ գեղանկարչին. «Ազատ մոտեցումն եմ դավանում, «բլյուզն» է ինձ հետաքրքրում, իմ նկարչությունը նմանեցնում եմ «բլյուզի»: Նկարը սկսում եմ, եւ չգիտեմ՝ ի՞նչ ավարտ է ունենալու: «Բլյուզի» այդ հնարավորությունը հենց հոգեհարազատ է ինձ, երբ հավաքվում են մի քանի հոգի, մեկը սկսում է, իսկ մյուսը շարունակում...»:

Ունի՞ արդյոք թեմատիկ նկարներ. «Թեմա հասկացությունը հանել եմ մեջիցս, պարզապես սկսում եմ նկարը, եւ վերջում ինքն ինձ հուշում է, ինչպես պիտի լինի ավարտը: Սեւակն ասում էր, չէ՞, ես Աստծո քարտուղարն եմ: Եվ դա պատահական չէ»:

Այնուամենայնիվ, նշենք, որ Ուբակն ունի թեմատիկ նկարներ, Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու խորանը զարդարում է Աստվածամոր պատկերը մանկան հետ, երկու նկարներ եւս՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոց, մյուսը՝ Գրիգոր Նարեկացի եւս եկեղեցում են տեղ գտել: Ամերիկացիները պատվիրել են նկարել Քրիստոսի ծնունդը եւ Հարությունը: Այդ նկարներն արվեստանոցում են:

Ո՞ւմ է նախընտրում գեղանկարչության մեծերից. «Տարբեր տարիքում տարբեր ոգեւորվածություններ են եղել. վաղ շրջանում էժեն Դելակրուա, Ժենիկո, Վան Գոգ, Սեզան, Պիկասսո, հայ գեղանկարիչներից՝ Սարյան, Մինաս, Ժանսեմ: Դե իսկ Արշիլ Գորկին հզոր է...»:

Գեղանկարչի արվեստի մասին կարծիք հարցրի վերոնշյալ երեկոյի մասնակից, Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանից. **«Ի՞նչ կարելի է ասել Ռուբեն Կոստանդյանի արվեստի մասին».** Նայելով նրա նկարները՝ կարող եմ ասել՝ մեծ

էջ 8

«Բազմավեպը»՝ հայկական հնագույն հանդես

Արմեն Կարապետյան

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրն իր խոր կնիքն է դրել նրա ողջ մշակույթի վրա: Պատմական դժնի ճակատագրի ելեւէջները դրոշմված են նաեւ հայ պարբերական մամուլի սկզբնավորման, ընթացքի, բնույթի եւ բովանդակության վրա: Հայ ժողովրդի քաղաքական անագորույն ճակատագիրը, երկրի բռնի բաժանումը տարբեր հատվածների, գաղթօջախների առաջացումը տարաբնույթ պայմաններ են ստեղծել հայության քաղաքական, մշակութային եւ հոգեւոր-բարոյական արժեքների ստեղծման համար: Այդ առումով եւ այդ կտրվածքով քննելիս բոլորովին էլ զարմանալի չէ, որ հայ առաջին պարբերականը՝ «Ազդարարը» եւ առաջին շարքում նաեւ «Բազմավեպը» հիմնադրվել են Հայաստանի եւ հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս: Հայ մամուլի պատմության անդաստանում հատկապես հիշատակելի են Մխիթարյան միաբանության ներդրումն ու ջանքերը: 1717 թ. սեպտեմբերին հայազգի մի խումբ հոգեւորականներ Մխիթար վարդապետ Սեբաստացու առաջնորդությամբ իջեւանեցին Իտալիայի Վենետիկ քաղաքից դեպի հարավ գտնվող «Սուրբ Ղազար» կղզում: Այդ կղզու անունը հետագայում պիտի նշանավոր դառնար հայ մատենագրության, գիտության եւ մշակույթի էջերում: Մխիթարյաններն արդեն երեք դար շարունակ էական ավանդ են ներդրել հայ մշակույթի պատմության մեջ՝ հրապարակելով հայագիտական կարեւոր նշանակություն ունեցող պատմական եւ պատմագիտական սկզբնաղբյուրներ, բառարաններ, լեզվագիտական, աշխարհագրական, պատմական ուսումնասիրություններ, անտիկ գրականության թարգմանություններ: Հիմնադրման առաջին իսկ տարիներից Մխիթարյան միաբանությունը հանդիսացել է հայագիտության եւ կրթական-մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Միաբանության կրթօջախներում ուսումնառություն են անցել հետագայի նշանավոր մի շարք այրեր՝ պատմաբան Միքայել Չամչյանը, բանաստեղծներ Մկրտիչ Պեշիկթաշլյանն ու Դանիել Վարուժանը, պատմավիպասան Ծերենցը, գրող, հրապարակախոս եւ հասարակական գործիչ Արփիար Արփիարյանը, հանրահռչակ դերասաններ Վահրամ Փափազյանն ու Պետրոս Ադամյանը եւ ուրիշներ: Մխիթարյան միաբանների մոտ հայոց լեզվին եւ հայ միջավայրին առնչվել են, ապա հայերենին տիրապետելու իրենց առաջին փորձերն են արել օտարազգի հեղինակություններ՝ հանճարեղ բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը, եվրոպական պատմավիպասանության հիմնադիր Վալտեր Սքոթը, բանաստեղծ, թատերագիր Ալֆրեդ դը Մյուսեն: Նրանք շատ բարձր են գնահատել Մխիթարյանների դերակատարությունը հայկական մշակույթի, գիտության եւ մամուլի զարգացման գործում:

Մխիթարյանները բարձր պահեցին հայ մամուլի անունն ու պատիվը: Նրանք մեկը մյուսի հետեւից հրատարակեցին աշխատություններ ու պարբերականներ, որոնք կոչված էին նոր մթնոլորտ ու նոր իրավիճակ ստեղծելու հայ գիտական մտքի եւ պարբերական մամուլի անդաստանում:

Հայ անդրանիկ պարբերականը կարճ կյանք ունեցավ: Նրա փակվելուց երեք տարի անց՝ 1799 թ., Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանը լույս է ընծայում «Տարեգրություն» անունով պարբերականը՝ որպես «Հիշատակարան քաղաքական, պատերազմական, եկեղեցական եւ բանասիրական անցից եւ դիպվածոց աշխարհի»: Այն լույս տեսավ մինչեւ 1802 թվականը: «Տարեգրության» յուրաքանչյուր հատոր բաղկացած էր 884 էջից: Բոլոր նյութերը շարադրված են արեւմտահայ աշխարհաբար լեզվով: Յուրաքանչյուր հատորում տեղեկություններ էին հաղորդվում նախորդ տարվա ընթացքում աշխարհում տեղի ունեցած քաղաքական անցքերի, մշակութային կյանքում եղած նորությունների, առեւտրական կապերի եւ հարակից այլ երեւույթների մասին: Մխիթարյան հաջորդ հրատարակությունը նույնպես Վենետիկում լույս տեսած «Եղանակ Բյուզանդյան» ամսաթերթն է:

«Եղանակ Բյուզանդյան» պարբերականը հրատարակվում էր կրկին Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ: Այս պարբերականում եւս նյութերը շարադրված են աշխարհաբար դյուրամատչելի լեզվով: Յուրաքանչյուր հատոր բաղկացած էր 288-300 էջից: Էջերը զարդարված են մանրանկարներով: Պարբերականում ավելի մեծ տեղ էր հատկացված հայոց բազմադարյան պատմության հարցերին, հատկապես հերոսական դրվագների նկարագրությանը, պատմական նշանավոր դեմքերի գործունեությանը: Այն գոյատեւել է մինչեւ 1820 թվականը՝ շուրջ 17 տարի:



Մխիթարյան միաբանության երրորդ պարբերականը «Դիտակ Բյուզանդյան» երկշաբաթաթերթն է, որը լույս է տեսել 1812 թ. Վենետիկում, աշխարհաբար լեզվով: Նրա առաջին խմբագիրն է եղել Գրիգոր վարդապետ Գապարաճյանը: Այնուհետեւ պարբերականը խմբագրել են Մադաթիա Ֆյուսկյուլճյանը եւ Մանվել Ջախջախյանը: Թեեւ սույն պարբերականի լույս ընծայումն իրականացվեց Կ. Պոլսում հիմնադրված «Արշարունյաց ընկերության» նախաձեռնությամբ, սակայն նրա գաղափարական ու քաղաքական բովանդակությունը վերահսկվում էր Մխիթարյանների կողմից: «Դիտակ Բյուզանդյանը» ուներ ամսագրին հատուկ ծավալ, բայց բովանդակությամբ լրագիր էր, քանի որ լուրեր ու տեղեկություններ էր հաղորդում օրվա անցուդարձի, կատարված դեպքերի՝ «քաղաքական ու պատերազմական, բանասիրական ու եկեղեցական դիպվածների» վերաբերյալ: Պարբերականն ունեցել է հատուկ աշխատակիցներ, ովքեր պարզ ու հասկանալի լեզվով հոդվածներ եւ այլ նյութեր են գրել գիտական աշխարհում տեղի ունեցող նորությունների մասին: Այն անդրադառնում էր ինչպես անցյալին, այնպես էլ իր ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններին, սակայն ցուցաբերում էր չափազանց զգուշավոր մոտեցում: «Դիտակ Բյուզանդյանը» հրատարակվել է մինչեւ 1816 թվականը:

Մխիթարյան միաբանության հերթական պարբերականը 1843 թվականին լույս տեսած «Բազմավեպն» է, որն ինքնին նշանավոր դարձավ նաեւ նրանով, որ շարունակում է հարատեւել մինչեւ օրս: Այն հանդես եկավ որպես օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելյաց: Իսկ «Բազմավեպ» անունը հուշում էր, որ այն բազում բաներ վիպող է եւ բազմապիսի բաներ պատմող: «Բազմավեպի» առաջին խմբագիրը եղավ բազմափորձ եւ բանիմաց Գաբրիել Այվազովսկին, ով այդ պահին գտնվում էր ամենածաղկուն տարիքում՝ երեսունմեկ տարեկան հասակում եւ այդ ոչ հեշտ ու շատ պատասխանատու պարտականությունները կատարեց շուրջ վեց տարի: Իսկ խմբագրական խորհրդի անդամներն էին Ղեւոնդ Ալիշանը եւ Հովհաննես Սորկուճյանը:

«Բազմավեպ» հանդեսում հաճախակի էին փոխվում խմբագիրները: Բավական է նշել, որ 1843-ից մինչեւ 1880 թվականն այն ունեցել է տասներկու խմբագիր (Գ. Այվազովսկի՝ 1843-1849, Ղեւոնդ Ալիշան՝ 1849-1851, Օքսիենտիոս Գուրգենյան՝ 1852-1853, Գրիգոր Ճելալյան՝ 1854-1856, այնուհետեւ՝ 1858-1861 եւ 1863-1866, Հմայակ Պապիկյան՝ 1856-1861, Ա. Սիոնիկ՝ 1862-1866, Նորայր Բյուզանդացի՝ 1867-1868, Ա. Գարթանյան՝ 1868-1870, Հ. Իսվերտյանց՝ 1871-1872, Կ. Իսկենտերյան՝ 1873-1875, Ա. Սուքրյան՝ 1875-1876, Ա. Բասքանտիլյան՝ 1877-1882:

Խմբագիրների այդպիսի հաճախակի փոփոխությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ միաբանության պատասխանատուները զգաստ եւ մշտարթուն հետեւում էին հանդեսի խմբագիրների ծավալած գործունեությանը եւ որոշակի խստապահանջկոտություն ցուցաբերում: Վերոնշյալ պահանջկոտությունը հստակ սահմանում էր, որ որեւէ խմբագիր կամ աշխատակից իրավունք չուներ խախտելու միաբանության կանոնադրությամբ սահմանված օրենքներն ու չափանիշները եւ օտար տարրեր մտցնել կրոնական դավանանքի վարդապետության մեջ:

«Բազմավեպը» ասպարեզ ելավ նախեւառաջ իր ժամանակի թելադրանքով: Այն լեզվական առումով դյուրին եւ մատչելի հարթակ էր բացում հայ իրականության եւ աշխարհի իրականության զանազան ու բազմաբնույթ խնդիրները շոշափելու եւ այդ ամենը հայախոս զանգվածներին հասցնելու համար: Իսկ 19-րդ դարի կեսերն ու վերջերն իսկապես մի ցնցող ու արժեքային առումով հարափոփոխ ժամանակաշրջան էր հին աշխարհամասի ժողովուրդների կյանքում: Հայ իրականությունը, այդ իրականության եւ միջավայրի մեջ ապրող հայ մարդն ու քաղաքացին չէին կարող երկար կտրված մնալ աշխարհում ընթացող քաղաքական, հոգեւոր-բարոյական, տնտեսական, մշակութային գործընթացներից: Ու այդ բանում նրան օգնում եւ զորավիգ էին «Բազմավեպը» եւ Մխիթարյան միաբանության հայրերի հրատարակած մյուս արժեքավոր գործերը:

«Բազմավեպի» խմբագիրներն ու գլխավոր աշխատակիցները եղել են ժամանակի ամենաուսյալ, զարգացած, կիրթ ու առաջադեմ անհատները ոչ միայն հայկական իրականության, այլեւ եվրոպական եւ համաշխարհային չափանիշներով: Նրանք քաջ հասկանում եւ պատկերացնում էին խնդիրների եւ հիմնահարցերի այն ամբողջ հրամայականը, որ ծառացած էր հայ ժողովրդի եւ հայ սերունդների առջեւ:

Չուշանա՛լ, հետ չմնալ աշխարհում ընթացող գիտական, մշակութային, քաղաքական գործընթացներից, չմեկուսանալ սեփական միջավայրի պատերի ներսում,- ահա՛ այն կարգախոսն ու սկզբունքային մոտեցումը, որ առաջին իսկ համարներից որդեգրեցին «Բազմավեպի» խմբագիրներն ու Մխիթարյան միաբանության առաջնորդները: Այդ խնդիրները լուծելու համար հանդեսին անհրաժեշտ էր նախեւառաջ առաջնորդվել լեզվական նոր քաղաքականությամբ: Ահա այդ պատճառով եւ նպատակով է, որ «Բազմավեպը», ի տարբերություն ավելի վաղ հրատարակված Մխիթարյան Միաբանության պարբերականների, որդեգրեց ոչ թե «ռամկախառն» աշխարհաբարը, այլ 19-րդ դարի առաջին տասնամյակների արեւմտահայ մտավորականության գործածած լեզուն, որը միայն նոր էր սկսել ձեւավորվել որպես գրական լեզու եւ դեռ ճանապարհ ուներ անցնելու:

Առհասարակ հանդեսը վարում էր լեզվական ճկուն քաղաքականություն՝ գտնելով, որ որոշ նյութեր նախընտրելի է հրապարակել գրաբարով (հատկապես բանաստեղծական քերթվածքները): Լեզվական այսպիսի «երկկենցաղությունը» ընկալելի եւ հասկանալի էր ժամանակակիցների կողմից: Հանդեսի էջերում թարգմանական գրականության ընտիր էջեր էին ներկայացվում, հակապես 19-րդ դարակեսի ֆրանսիական գրականության հանճար Լամարթինի գործերը, որոնք այնքան մեծ ազդեցություն են գործել ժամանակի եւ հետագայի հայ բանաստեղծական մտքի փայլատակման վրա: Այս առումով տեղին է մեջբերել եւ դիտարկել հանդեսի անդրանիկ համարից հետեւյալ իմաստավորումը. **«Մեր բանասերներէրուն հաճոյական բան մը ընել ուզելով, աս օրագրիս մէջ երբեմն երբեմն ազգային մատենագրութենէն ի՛զատ՝ կնայինք, որ հիմակուան օտար ազգաց մատենագրութեանը վրայ ալ խօսինք, ու մեր ատենի երեւելի մատենագիրներուն գրուածներէն գէթ մանր ճաշակներ տանք՝ արձակ կամ ոտանաւոր թարգմանութեամբ: Այս անգամ հոս դրածնիս Լամարթինին գեղեցիկ ոտանաւորներէն մէկն է՝ ճիշդ թարգմանած»**:

Այնուհետեւ նշվում է, որ Ալֆոնսո Լամարթինն այժմյան ողջ Եվրոպայի լավագույն ստեղծագործողն է եւ իր գրվածքների երեւելի հատկանիշներն են. **«հաստատուն բարեպաշտութեան հոգի, փափուկ զգացմունք, բարակ մտածողութիւն եւ վառվռուն երեւակայութիւն»:** Վերջում ասվում է, որ հաջորդ անգամներ **«մէկալներուն ալ ճաշակը կուտանք»:** Ահա այսպես, սկսած անդրանիկ համարից, «Բազմավեպը» քայլ առ քայլ, համար առ համար դաստիարակում եւ կրթում էր հայ ընթերցողների միտքն ու հոգին, գեղագիտական ընտիր ճաշակ զարգացնում: Սկսած հատկապես առաջին խմբագիրներից, հանդեսի էջերում ձեւավորվում, ամրապնդվում եւ հաստատակամ է դառնում ազգային ինքնության եւ հոգեւոր հայրենիքի զգացողությունն ու հավատամքը: Հանդեսի առաջին տարին ամփոփելուց հետո, 1844 թվականի

Կապանը հրաժեշտ տվեց Կամո Արզումանյանին

Ապրիլի 15-ին մարզկենտրոնի բնակչությունը վերջին հրաժեշտը տվեց երկու օր առաջ մահկանացուն կնքած՝ Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն, ՀՀ վաստակավոր արտիստ Կամո Արզումանյանին: Չորս տասնամյակից ավելի նրա կյանքը կապված էր թատրոնի հետ: 1977-ին ընդունվել էր Կապանի պետթատրոն, հետո ռեժիսորի օգնական էր, ապա գլխավոր ադմինիստրատոր, 1991-ից մինչեւ կյանքի վերջին օրը թատրոնի տնօրենն էր: Նրա թատերական գործունեության մեջ հիշարժան է 1995 թվականը, երբ Չարենցի «Կապկազ թամաշա» բեմադրության մեջ մարմնավորեց Թոփչիբաշեւի կերպարը: Ներկայացումն արժանացավ ՀԼԿԵՄ կենտկոմի մրցանակին, նաեւ բեմադրվեց Ռուսաստանի մայրաքաղաքի Մայակովսկու անվան պետական ակադեմիական թատրոնի բեմում: Կամո Արզումանյանը դերասանական գործունեության ընթացքում հանդիպել է Մհեր Մկրտչյանին, Արմեն Խոստիկյանին, Լեւոն Թուխիկյանին, Ազատ Գասպարյանին, հայ բեմարվեստի այլ նվիրյալներին՝ ստանալով նրանց օրհնությունը: Կամո Արզումանյանը Հայաստանի թատերական գործիչների միության «Արտավազդ» մրցանակի դափնեկիր էր, արժանացել էր «Մովսես Խորենացի» մեդալի:

Մեծ ջանքերի գնով կարողացավ պահել թատրոնը, որ չլռի բեմական խոսքը: Նրա պաշտոնավարման օրոք թատրոնն իր շենքն ունեցավ, ասել է թե՝ մշտական հասցեն: Հայ-ադրբեջանական հակամարտության օրերին եւ տարածաշրջանում հրադադար հաստատվելուց հետո տնօրենի նախաձեռնությամբ թատրոնի դերասանները հանդես են եկել առաջնագծում եւ զորամասերում: Անպակաս էին բեմադրությունները մարզի կրթօջախներում՝ այդպիսով նպաստելով դեռահասների գեղագիտական դաստիարակությանը:

Առավոտվանից թատրոնը սգո հանդերձանքի մեջ էր: Կեսօրին մոտ նրա դագաղի մոտ պատվո պահակ էին կանգնել նրա գործընկերները, արվեստի երկրպագուները, մտերիմները: Ճանաչված տնօրենին եւ դերասանին վերջին հարգանքի տուրքը մատուցելու էին եկել թատերական աշխարհի ներկայացուցիչներ մայրաքաղաքից եւ մարզերից:

Տեղի ունեցավ սգո հանրահավաք: Կամո Արզումանյան մարդու եւ դերասանի մասին խոսք ասաց Լեւոն Մարգարյանը: Նրա կերպարն ամբողջացավ Սյունիքի մարզպետարանի քարտուղարի տեղակալ Գրիգոր Թադեւոսյանի, Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ, ՀՀ վաստակավոր արտիստ Հակոբ Ղազանչյանի, բանաստեղծ-թարգմանիչ Գագիկ Դավթյանի, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանի, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանի հիշատակի խոսքերում:

Ընթերցվեցին հանրապետության թատերական կոլեկտիվների ցավակցական հեռագրերը, որոնցում, մասնավորապես, նշված է, որ Կամո Արզումանյանի մահը կորուստ էր հայ թատերարվեստի համար:

Վերջում Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը հոգեհանգստյան պաշտոն կատարեց:

Ինչպես վայել է թատերարվեստի նվիրյալներին, Կամո Արզումանյանին վերջին հանգրվան ճանապարհեցին ծափերով:

Վահրամ Օրբելյան

Ձրվեժի բարձունքում կմնաս...

Դավիթ-Բեկ կերպարավորած Կամո Արզումանյան...

Գնացիր մեր առօրյայից, մշակույթի աշխարհից, ընկերոջ ու համերկրացու կյանքից:

Անվանի թատերական գործիչն ու շնորհալի կազմակերպիչը մեզանի՛ց գնաց: Կենարար հումորի շա՜տ բան պակասեց գեղարվեստի մեր բարձր աշխարհում:

Թանկագին Կամո Արզումանյան դերասանի համաժողովրդական վաստակի բնորոշիչ է անփարատ վշտով գրված «Ափսոսանք» բանաստեղծությունը՝ մեծ արտիստի, հայրենասեր քաղաքացու պատվարժան հիշատակին:

Ափսոսանք

Ձրվեժի դո՛ւ բարձունք, հարակա՛, Արդեն, անարդյունք իմ արցո՛ւնք, Քո հոգին վերընթաց, թափառած, Տառապած՝ արվեստի հանուն:

Հումորի, երգեհոն մե՜ծ երթի Թատրոնում՝ աղոթքի ճգնած, Շտապեցիր մի ուղի, որ ավա՜ղ Քո աղը ու հացը սգանք:

Խոցեցիր մորմոք անողոք Կապանի՛ ոգի, ափսոսա՜նք, Ձրվեժի ուժգնությամբ խրո՛խտ՝ Ղեկավար, մարտիկ, դերասան:

Արթուր Առաքելյան
Հայաստանի գրողների միության անդամ,
«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն

Ցավակցություն Ռոբերտ էջանանցու եւ Ստեփան Պետրոսյանի ընտանիքներին

Ապրիլի 12-ին ավտովթարի զոհ դարձավ Հովհաննես Ստեփանի Պետրոսյանը:

Ողբերգական պատահարի հետեւանքով ընդհատվեց 41-ամյա տղամարդու, երկու երեխայի հոր կյանքը:

Հովհաննեսը Լեռնաձոր համայնքի երկարամյա ղեկավար Ստեփան Պետրոսյանի որդին էր:

Հովհաննեսը մեծահամբավ Ռոբերտ էջանանցու դստեր՝ Լիլիթ Գրիգորյանի ամուսինն էր:

Մեր ցավակցությունն ենք հայտնում նորոգ հանգուցյալի հարազատներին եւ մերձավորներին՝ անդառնալի կորստյան առթիվ:

«Սյունյաց երկիր»

առաջին իսկ համարի առաջաբանում հետեւյալ ուշագրավ դիտարկումն է. **«Ուղիղ եւ գեղեցիկ դիտաւորութիւն, ամենայարմար միջոց, հաստատուն յոյս, անխոնջ աշխատութիւն, եւ ամենէն ավելի ճշմարիտ ազգասիրութիւն. Ասոնք եղան «Բազմավէպին» առաջին տարվանը մէջ մեր առաջին քաջալերող եւ մխիթարող մտածութիւնները»:** Հիրավի նույնքան ազդեցիկ է սույնի շարունակությունը. **«մարդու մը՝ իր ազգին լուսաւորութեանն ու յառաջդիմութեանը համար աշխատելէ աւելի գեղեցիկ ու վսեմ ի՞նչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ. Աս դիտաւորութեան հասնելու համար ուրիշ ի՞նչ յարմար միջոց կրնայ ըլլալ, բայց եթէ ընտանի եւ փոփոխական ու զուարճալի ոճով մը ոչ միայն դիւրիմաց բաները սորվեցնել չգիտցողին, հապա նաեւ բարակ եւ խորունկ գիտելիքները մանրացուցով կամ դիտակով ցուցընելու մը պէս՝ պարզել, մեկնել, ու ամենուն հասկընցուելու բաներ ընել. Բարոյական խրատները ծարաւի հոգւոց յստակ ջրի պէս իմցընել. Մարդկային խելքին գիտերն ու հնարքները իբրեւ հայլիի մը մէջ ցուցընընել.»** : Իր գոյության այս 175 տարիների ընթացքում «Բազմավեպը» հնարավորինս ամեն ինչով նպաստեց համայն հայության ազգային ինքնության ամրապնդմանն ու նրա հոգեւոր էության հարստացմանը: Հայրենասիրության դասական ձեւակերպումը, որն այնքան հոգեզմայլ եւ խորունկ իմաստությամբ ձեւակերպել է հանդեսի մեծահռչակ խմբագիրներից Ղեւոնդ Ալիշանը, շատ սերունդներ է կրթել ու տարել հետեւից. **«Ուր քաղաքացիք չիք՝ չկա եւ հայրենիք... բուն իսկ հայրենիք մեք եմք, անձն յուրաքանչիւր, եւ լավութիւնք նեցուկք են նորա»**: Ալիշանյան կամ «Բազմավեպ»-յան հայրենասիրությունը սահմանում էր սույն կարգն ու օրենքը. **«ճանաչել եւ պահել անվթար զսեփական շնորհս ազգիս, զլեզու նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն եւ զախորժակս նորա անվնաս, զհարազատ դպրութիւն նորա եւ զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»**:

«Բազմավեպը» տասնամյակներ շարունակ մաքառեց իր լավագույն խմբագիրների եւ աշխատակից-հոդվածագիրների ջանքերով ստեղծելու օտար տիրակալությունների ներքո բաժան-բաժան եղած ու անպաշտպան մնացած հայ ազգի ինքնապաշտպանության հոգեւոր համակարգը՝ ձգտելով նախեւառաջ վերարթնացնել որպես ժողովուրդ՝ նրա ազատ ու անկախ ապրելու եւ հենց այդպիսի հայրենիք ունենալու հիշողությունն ու բարոյականային որակները:

Նախապես հաշվարկված ու մշակված գրական, գիտական ու մշակութային խելոք, լայնախոհ քաղաքականությամբ «Բազմավեպը» իր էջերը հյուրընկալորեն բացեց հայ իրականության տարբեր շերտերն ու բնագավառները ներկայացնող մտավորականների առջեւ, որոնք ոչ միայն չէին անդամակցում Մխիթարյան միաբանությանը, այլեւ երբեմն համակիր ու անդամ էին հակընդդեմ որեւէ այլ կրոնական եւ հասարակական կազմակերպության: Ամսագրի էջերը 19-րդ դարի կեսերին բացվեցին նաեւ ստեղծագործող կին անհատների առջեւ, որը բացառիկ մի երեւույթ էր իր ժամանակի համար: 1861 թ. մարտին հանդեսի էջերում հրապարակվեց Սրբուհի Աստվածատուրյանի գրաբար երկարաշունչ մի բանաստեղծությունը:

Տարեցտարի «Բազմավեպի» էջերում հրապարակվում էին հայաշխարհի տարբեր հատվածները ներկայացնող հեղինակների գործերը (ինչպես արեւմտահայ, այնպես էլ արեւելահայ, ինչպես պոլսահայ, այնպես էլ թիֆլիսահայ, ինչպես նաեւ աշխարհի զանազան գաղթօջախների): Դրանով իսկ հանդեսը տարածվում եւ հոգեւոր-բարոյական առումներով արմատավորվում էր հայության բազմաբեւեռ հատվածների շրջանում՝ դառնալով նրանց սեղանի հույժ սպասելի պարբերականը: Դա մեծապես ոգեւորում էր ու նոր լիցքեր հաղորդում հանդեսի պատասխանատուներին, որոնք արդեն 1870-ական թթ. պատվախնդրությամբ ազդարարում էին, որ իրենց ամսագիրը Ս. Ղազար կղզուց տարածվում է մինչեւ Ասիայի, Եվրոպայի եւ Աֆրիկայի հայահոծ ու հայաշատ գաղթօջախները՝ Կ. Պոլիս, Զմյուռնիա, Բաղդադ, Կահիրե, Կալկաթա, Լոնդոն, Փարիզ, Մոսկվա, Բաքու, Թիֆլիս եւ այլուր:

Այսինքն, ասել կուզի, որ «Բազմավեպը» մեկ կրոնական միաբանության օրգանից վերածվում էր ընդգծված ու շնչեղ համահայկական բնույթի եւ ուղղվածության հանդեսի:

Եվ ամենից կարեւորն ու շեշտադրելին՝ «Բազմավեպը» տասնամյակներ շարունակ դարձավ ոչ միայն հայ բազմաշերտ ընթերցողների հոգեւոր սննդի մատակարարը, այլեւ վերածվեց հայ ընթերցող եւ մտավոր հասարակայնության մտավոր, գիտական, բարոյական, մշակութային ոգորումները կազմակերպող, ընթացք եւ ուղղություն ցույց տվող ուժի կամ կենտրոնի:

Քսաներորդ դարում «Բազմավեպը» շարունակում էր իր հայագիտական, եւ դրանով իսկ հայրենասիրական հատուկ ուղղվածությունն ու առաքելությունը՝ ասպարեզ տալով իր ժամանակի հայագիտական խոշոր դեմքերին: Հանդեսը կրկին հատուկ ուշադրություն էր դարձնում պատմաբանասիրական, աշխարհագրական եւ ժողովրդագրական թեմաներին: Այստեղ պետք է նշել, որ «Բազմավեպը» առհասարակ քիչ է շոշափել քաղաքական թեմաները, քիչ է անդրադարձել իրականության մեջ առկա սոցիալ-քաղաքական սուր խնդիրներին, որն առիթ է տվել ծայրահեղ մտայնության տեր որոշ գործիչների այն որակել որպես «էկլետիկ», այսինքն՝ բոլոր սկզբունքները խառնիխուռն միավորող եւ հասարակական երեւույթներին իբր ոչ առաջադեմ դիրքերից մոտեցող պարբերական: Մինչդեռ «Բազմավեպը» շարունակում էր հավատարիմ մնալ իր ուղեգծին եւ դրանում էր նրա անբեկանելի մեծությունը, առաջատարությունն ու սկզբունքայնությունը՝ ծառայել միայն ու միայն հայագիտությանը՝ առանց որեւէ քաղաքական համոզմունքի, համակրանքների կամ հակակրանքների: Փոխարենն այս շրջանի «Բազմավեպին» հատուկ է հայերի մշակութային, հոգեւոր-բարոյական կողմնորոշումներին նրբորեն արձագանքելը, Սփյուռքի եւ Հայաստանի կենտրոններում հայկական հինավուրց քաղաքակրթության ավանդների ու ժառանգության պաշտպանությունը, մշակութային տեղաշարժերի արտացոլումը մեր մտավոր կյանքի ոլորտներում մի կարեւոր նպատակադրումով՝ նպաստել հայոց հոգեւոր միասնությանն ու ներդաշնակությանը հայագիտության անդաստանում եւ հայագիտության միջոցով:

«Բազմավեպը» վերոնշյալ ժամանակաշրջանում տպագրել է հայրենիքի եւ Սփյուռքի բազմաթիվ հայագետներին, ինչպես նաեւ օտարազգի ճանաչված հայագետ գիտնականների:

Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին «Բազմավեպը» թեեւ որոշ հասկանալի սահմանափակումներով, այնուամենայնիվ, միշտ պահպանեց կապը հայրենիքի հետ եւ շարունակում էր էջերը ծառայեցնել հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանն ընդհանուր ազգային-հայագիտական հենքի եւ ուղղվածության վրա:

Վերջին շրջանում, այնուամենայնիվ, հանդեսը, հավանաբար աշխարհաքաղաքական կտրուկ փոփոխությունների բերումով, ստիպված է արտահայտել որոշակի իր վերաբերմունքը վերոնշյալ քաղաքական իրողությունների եւ զարգացումների վերաբերյալ՝ այդ նպատակով ընտրելով հատուկ ժանր կամ ավելի շուտ՝ հին ժանրի նորովի օգտագործումը, որը կոչվում է խմբագրական: Զուսպ եւ համառոտ, բայց եւ շատ արտահայտիչ այդ խմբագրականներում խտացված շատ բան է ասվում, թեեւ բացառապես բարոյախոսական շրջանակներում: Այսպես, խմբագրականներ են նվիրվել գլոբալիզացիայի, գենդերային ծայրահեղությունների, հասարակության մեջ մտավոր բեւեռացումների, անհանդուրժողականության եւ իր իսկ բնութագրումով, «ամեն ինչ ամեն բանի դեմ եւ ամեն ոք ամեն ինչի դեմ» իրողությունների կամ սկզբունքների դատափետմանը, որոնք «Բազմավեպի» խորին համոզումով՝ «մեր արդիական ոսոխն են»:

Վերջին շրջանում ավելացվել են նոր «խորագրեր, բնութագիրներ եւ ուսումնասիրություններ, հաղորդումներ, նշումներ, վիճարկումներ»:

2012-2017 թթ. հանդեսը տպագրվում է տարեկան երեք կամ չորս անգամ, ընդ որում՝ հաճախ միացյալ թվահամարներով, որն ինչ-որ տեղ մատնում է նյութականի զգացնել տվող կարիքը հրատարակիչների մոտ:

Այդ առումով տեղին է հիշեցնել ՀՀ նոր իշխանություններին, որ կարելի եւ պետք է հատուկ ուշադրություն դարձնել հայկական հնագույն սույն հանդեսի նյութական կողմի ամրապնդմանը:

Հայ ամենաերկարակյաց հանդեսին ցանկանում եւ մաղթում ենք երկար ու հարատեւ երթ, այնքան երկար ու հարատեւ, որքան երկար հարատեւելու է հայագիտությունը՝ իր անբաժան ու մշտական ուղեկցի՝ «Բազմավեպի» հետ:

Տնօրենի փոփոխություն՝ Գորիսի բժշկական կենտրոնում

Սյունիքի մարզպետի 2019թ. ապրիլի 8-ի N 68-Ա կարգադրությամբ, հիմք ընդունելով«Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սամվել Ափանդյանի դիմումը, լուծվել է վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Նույն կարգադրությամբ՝ ապրիլի 9-ից Դավիթ Մաշուրյանը նշանակվել է «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

syunik.mtad.am

Նվիրված հոգեկան առողջության խնդիրներին

Ճանաչված հոգեբան Կարինե Նալչաջյանը Եվրոպական համալսարանի Կապանի մասնաճյուղում անցկացրեց դասախոսություն՝ **«Հոգեկան առողջության եւ հիվանդության խնդիրները»** թեմայով: Չի կարելի ասել, թե բանախոսը հյուր էր կրթօջախում: Նա դասավանդում է Եվրոպական համալսարանում, հեռավար ուսուցում է անցկացնում նաեւ բուհի Կապանի մասնաճյուղի հոգեբանության խմբի ուսանողների համար: Պարզապես այս անգամ ուզում էր լինել Կապանում, քննություններից առաջ կոնսուլտացիա անցկացնել ուսանողների հետ, ովքեր հմտանում են հոգեբանի մասնագիտության մեջ: Իր խոսքում, նշեց, որ նախեւառաջ կարեւոր է համարում հասարակության մեջ հոգեբանական գրագիտության տարածումը: **«Հոգեբանությունը մեր օրերում լուրջ նվաճումների է հասել, որոնցով կարելի է զինվել եւ ճշգրիտ կողմնորոշվել առօրյա կյանքի տարբեր ոլորտներում՝ սկսած երեխաների հետ փոխհարաբերություններից մինչեւ սոցիալ-քաղաքական ամենատարբեր երեւույթները»**:

Հոգեբանի դասախոսությունը հագեցած էր կյանքից վերցված օրինակներով, նա անդրադարձավ նեւրոզներին, անձի խանգարումներին, սահմանային իրավիճակներին, փսիխոզներին, օրինակ, այսպիսի մի թիվ հրապարակեց, յուրաքանչյուր հասարակության մեջ նեւրոզով տառապող մարդիկ 60-65 տոկոս են կազմում, եւ գնալով նրանց թիվն աճում է: Դրանց դրդապատճառները հասկանալու համար հնարավոր է դառնում ճիշտ կառուցելու հարաբերությունները դիմացինի հետ:

Երբեմն դժվար է ճշտել հոգեկան առողջության եւ հոգեկան տկարության՝ իրարից բաժանող սահմանը, որը շատ թափանցիկ է: Այս հարցին որոշակի պատասխան է տալիս մեծ հոգեվերլուծող Զիգմունդ Ֆրեյդը. «Մարդը հոգեպես առողջ է, երբ ունակ է սիրել եւ աշխատել»:

Դասախոսությունից հետո օրվա բանախոսը պատասխանեց միջոցառման մասնակիցների հարցերին:

Վահրամ Օրբելյան

«ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ. ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺՆԵՏԵՐ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2019թ. Մայիսի 8-ին՝ ժամը 13:00-ին «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ -ում, ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Խանջյան 14 հասցեում հասցեում տեղի կունենա «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով

2019 Թ. ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՕՐԱԿԱՐԳ

1. «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» բաց բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբում:

2. «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության հաստատում:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը սահմանվել է 2019 թ. մարտի 4-ը:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցողների գրանցումն սկսվում է 30 րոպե շուտ՝ ժամը 12:30-ին:

Բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին եւ նյութերին կարող են ծանոթանալ դիմելով 2019 թ. ապրիլի 22-ից յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 11:00 մինչեւ 16:30, ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Խանջյան 14 հասցեում:

Տրամադրվող տեղեկությունների եւ նյութերի ցանկը հետեւյալն է՝

ա. «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հարցերին կողմ քվեարկելու դեպքում ընդունվող որոշումների նախագծեր,

բ. «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբման կարգի նախագիծ,

գ. «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբման արդյունքների նախագիծ,

դ. «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ կանոնադրության փոփոխության նախագիծ:

Տեղեկացնում ենք Ձեզ նաեւ, կայանալիք բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի երկրորդ հարցին դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն պահանջել իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57-րդ եւ 58-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի հետգնումը կատարվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված գնով: Եթե բաժնետերը համաձայն չէ հետգնման գնի հետ, ապա նա իրավունք ունի բաժնետոմսերի վերագնահատման պահանջով դիմել դատարան՝ ընկերության կողմից բաժնետերերին վճարումը կատարելու սահմանված օրից երեք ամսվա ընթացքում:

Բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնման պահանջի իրավունքի իրականացման դեպքում պետք է մինչեւ 2019թ. հունիսի 22-ը՝ ժամը 18:00, «ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ ներկայացնել գրավոր դիմում՝ դրանում նշելով հետգնման ներկայացված բաժնետոմսերի քանակը եւ բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրը: Նշված պահանջը կարող է ներկայացվել, եթե 2019 թ. մայիսի 8-ին բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն ընդունի նշված որոշումը:

Սահմանված 45 օրվա ընթացքում ներկայացված բաժնետերերի հետգնման պահանջների հիման վրա ընկերության տնօրենը 2019թ. հունիսի 22-ից 30 օրվա ընթացքում կազմակերպում է բաժնետերերի բաժնետոմսերի հետգնումը եւ ընկերության բաժնետերերի ռեեստրում համապատասխան փոփոխությունների գրանցումը:

Խնդրում ենք Ձեզ ներկա լինել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին

«ԿԱՊՈՒՏՋՈՒՂ» ԲԲԸ տնօրենների խորհուրդ

Կորել է

Գորիսի միջնակարգ պրոֆեսիոնալ տեխնիկական N 41 ուսումնարանի 1976 թ. շրջանավարտ Սիլվարդ Սաշիկի Այվազյանի կարող-մոտորավարի ավարտական վկայականը:

Համարել անվավեր:

Հայ ժողովրդի այցեքարտը



Սյունիքի մարզային գրադարանի մշակույթի բաժնում ազգային գրադարանային շաբաթվա շրջանակում անցկացվեց ցերեկույթ՝ «Հայ ժողովրդի այցեքարտը» խորագրով: Մարզային գրադարանի մշակույթի բաժնի վարիչ Ելենա Լալազարյանը նախ հիշատակեց մեր ազգի այն մեծերի անունները (Կոմիտաս, Թումանյան, Անդրանիկ), որոնց 150-ամյա հոբելյանը լրանում է այս տարի: Այնուհետեւ անդրադարձավ հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, երաժիշտ-բանահավաք, խմբավար ու մանկավարժ Կոմիտասի կյանքին ու գործին, ում նվիրված էր ցերեկույթը:

Վաղ հասակում որբացած պատանու համար վճռորոշ է եղել 1881 թվականը, երբ ուսման են տվել Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, որտեղ գեղեցիկ ձայնի եւ կատարողական ունակության համար հատուկ ուշադրություն է դարձվել նրա երաժշտական դաստիարակությանը: Հետո Խրիմյան Հայրիկի բարեխոսությամբ եւ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի աջակցությամբ մեկնում է Բեռլին՝ կրթություն ստանալու: Ընդունվում է հռչակավոր Հումբոլդտի համալսարանը: Տարիներ անց եվրոպական երաժշտության եւ փիլիսոփայական մտքի ահռելի պաշարով վերադառնալով հայրենիք՝ Կոմիտասը ճամփորդում է Հայաստանի շրջաններով եւ գյուղերով՝ հավաքելով եւ մշակելով հարյուրավոր ժողովրդական երգեր, որոնք շուտով իր ստեղծած երգչախմբի հետ ներկայացնում է Եվրոպայում: 1915-ին վերապրելով Հայոց մեծ ցեղասպանության մղձավանջը՝ կորցնում է մտավոր հավասարակշռությունը, 1915-ին տեղափոխվում է Փարիզ եւ մինչեւ կյանքի վերջը մնում հոգեբուժարանում:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեցին տեսաֆիլմեր, որոնց միջոցով ավելի ամբողջացավ Կոմիտասի կերպարը: Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի երգեցողության դասատու Թերեզա Հովհաննիսյանը կատարեց մեծ երգահանի մշակած երգերից՝ «Սոնա յար», «Չինար ես», «Կաքավիկ» եւ այլն: Էկրանից հնչեց «Հորովելը»՝ Կոմիտասի կատարմամբ: Նաեւ հայտնվեց, որ Հոլիվուդում ֆիլմ է նկարահանվելու Կոմիտասի մասին:

Վահրամ Օրբելյան

Երեկո՝ Ուբակի արվեստանոցում

էջ 5

ներքնաշխարհի ունեցող անձնավորություն, խորաթափանց արվեստ, գույների ներդաշնակության աներեւակայելի համադրում, որից լույս է ճառագում, որովհետեւ այն, ինչ անթեղված է նրա ներսում, արտահայտվում է նրա արվեստի մեջ, եւ նրա նկարում առկա վեհությունը դառնում է նաեւ հասարակության հարստությունը: Ընդհանրապես յուրաքանչյուր ճշմարիտ արվեստագետ մատուցում է այն, ինչ իր մեջ գտնվում է, լինի դա երաժշտության, գույնի կամ խոսքի միջոցով:

Լինելով Ռուբեն Կոստանդյանի արվեստանոցում՝ զգում ես այդ վեհությունը: Իսկ այս երեկոն հաջողված էր, որովհետեւ մի արվեստանոցում մեկտեղված են արվեստով ապրող ու շնչող մարդիկ: Ցանկալի է, որ նման երեկոներն ավելի հաճախակի լինեն եւ մեծ շրջանակ ընդգրկեն: Որովհետեւ կան մարդիկ, ովքեր ուղղակի պահանջ ունեն նման մթնոլորտում արտահայտվելու, կիսվելու իրենց խոհերով, զգացմունքներով»:

Իսկ Ուբակը նեղսրտում է այն առիթով, որ Կապանում մի քանի տասնամյակ առաջ եղած բոհեմական միջավայրը պակասում է, եթե չասենք՝ վերացել է: Երբ արվեստագետները, ընդհանրապես ստեղծագործողները հավաքվում էին մի հարկի տակ՝ մի սրճարանում, մտքեր փոխանակում, խոսում իրենց անելիքներից: Իսկ մեր օրերում գեղանկարիչները հիմնականում հանդիպում են ցուցահանդեսների բացման ժամանակ...

Վահրամ Օրբելյան

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1150, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.03.2019թ.: